ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ

««ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» 2007 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 25-Ի ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» 2012 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 30-Ի ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան 21 հոկտեմբերի 2025 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով.

նախագահող՝ Արման Դիլանյանի (զեկուցող),

դատավորներ՝ Արտակ Զեյնալյանի
Հրայր Թովմասյանի,
Դավիթ Խաչատուրյանի,
Երվանդ Խունդկարյանի,
Հովակիմ Հովակիմյանի,
Էդգար Շաթիրյանի,
Սեդա Սաֆարյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչ՝ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց ««Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների՝ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում համագործակցության մասին» 2007 թվականի մայիսի 25-ի համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2012 թվականի մայիսի 30-ի արձանագրությամբ ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2025 թվականի հուլիսի 31-ի N 1032-Ա որոշմամբ հավանություն է տվել 2012 թվականի մայիսի 30-ին Աշգաբաթ քաղաքում ստորագրված ««Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների՝ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում համագործակցության մասին» 2007 թվականի մայիսի 25-ի համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2012 թվականի մայիսի 30-ի արձանագրությունը վավերացնելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է նշված արձանագրությունում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2025 թվականի օգոստոսի 5-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով վերոնշյալ արձանագրությունը, հետազոտելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. ««Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների՝ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում համագործակցության մասին» 2007 թվականի մայիսի 25-ի համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու

մասին» արձանագրությունը (այսուհետ նաև՝ Արձանագրություն) ստորագրվել է 2012 թվականի մայիսի 30-ին Աշխաբադ քաղաքում՝ (այժմ՝ Աշգաբաթ) «Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների՝ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում համագործակցության մասին» 2007 թվականի մայիսի 25-ի համաձայնագրում (այսուհետ՝ Համաձայնագիր) փոփոխություններ և լրացումներ կատարելու նպատակով:

Արձանագրությունը ստորագրվել է Հայաստանի Հանրապետության, Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության, Ղրղզստանի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության և Տաջիկստանի Հանրապետության կողմից:

Արձանագրությունն ուժի մեջ է մտնում այն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը Կողմերի կողմից կատարվելու մասին վերջին ծանուցումն ավանդապահին հանձնելու օրվանից: 2025 թվականի ապրիլի 23-ի դրությամբ Արձանագրությունն ուժի մեջ չի մտել:

2. Արձանագրության նախագծի 1-ին հոդվածի վերաբերյալ Հայաստանի Հանրապետությունը հանդես է եկել հայտարարությամբ՝ նշելով, որ «Հայաստանի Հանրապետությունն ելնում է այն հասկացողությունից, որ հետագայում Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների՝ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում համագործակցության մասին 2007 թվականի մայիսի 25-ի համաձայնագրի՝ փոփոխությունների և լրացումների մասին արձանագրությունները Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ կմտնեն միայն դրանց ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ, Հայաստանի Հանրապետության ազգային օրենսդրությամբ նախատեսված ներպետական ընթացակարգերը կատարելուց հետո»:

3. Արձանագրությամբ Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում է Արձանագրությամբ սահմանված կարգով և բովանդակությամբ փոփոխել Համաձայնագիրը, մասնավորապես՝ Համաձայնագրի 16-րդ հոդվածում և Համաձայնագրի անբաժանելի

մաս կազմող՝ Համաձայնագրի մասնակիցների ֆիզիկական կուլտուրայի և սպորտի խորհրդի մասին կանոնադրության (այսուհետ՝ Կանոնադրություն) մեջ, հետևյալ կարգով՝ Կանոնադրության I բաժնի 1.1-ին, 1.4-րդ կետերից հետո ավելացնել նոր պարբերություններ, ինչպես նաև Կանոնադրության I բաժնի 1.5-րդ կետից հետո ավելացնել 1.6-րդ և 1.7-րդ կետեր և IV բաժնի 4.7-րդ կետից հետո ավելացնել նոր՝ V բաժին՝ «Ֆինանսավորումը» վերտառությամբ, ինչպես նաև Կանոնադրության I բաժնի 1.1-ին, 1.2-րդ, 1.3-րդ, 1.4-րդ, 1.5-րդ կետերը և IV բաժնի 4.2-րդ, 4.5-րդ, 4.6-րդ և 4.7-րդ կետերը շարադրել նոր խմբագրությամբ:

4. Կանոնադրությունը լրացվել է «Ֆինանսավորումը» վերտառությամբ V բաժնով, ըստ որի՝

«5.1. Խորհրդի նիստերի անցկացման հետ կապված ծախսերը կատարվում են ընդունող ԱՊՀ մասնակից պետության պետական իշխանության համապատասխան մարմինների հաշվին:

5.2. Խորհրդի անդամների և նիստի մասնակիցների գործուղման ծախսերը կատարվում են ԱՊՀ մասնակից պետությունների պետական իշխանության գործուղող մարմինների և կազմակերպությունների կողմից»:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. ««Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների՝ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում համագործակցության մասին» 2007 թվականի մայիսի 25-ի համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու

մասին» 2012 թվականի մայիսի 30-ի արձանագրությամբ ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

21 հոկտեմբերի 2025 թվականի
ՍԴՈ-1799